104 ՇԱԲԱԹ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 7 — 1896 — ՇԱԲԱԹ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 7 № 104

ՔՍԱՆՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 բուբլի, կէս տարվանը 6 բուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.
Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.
Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».
Տէլէֆօն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)
Յայտա արութիւն ընդունվում է ամէն լեզուով.
Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Արգելքներ կեանքի մէջ. Հեռագիրներ. Պաշտօնական հաղորդագրութիւն.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մատենագրութիւն. Նամակ Շուշուց. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Վերջին տեղեկութիւններ. Քաղաքական դէպքերը. Նամակ Բոլգարիայից.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Վերջին լուր.

ԱՐԳԵԼՔՆԵՐ ԿԵԱՆՔԻ ՄԷՋ

—

Սկսվում է աշունը, և զանազան հիմնարկութիւններ և հաստատութիւններ պատրաստվում են գործունէութեան: Շուտով առաջ կը գան մի շարք խնդիրներ, ծրագիրներ և առաջարկութիւններ, որոնք վերաբերում են մեր ընթացիկ գործնական կեանքին և մեր գաղափարական առաջադիմութեան գործին: Այդ բոլորը հասարակական քննադատութեան նիւթ կը դառնայ: Սակայն կայ մի հանգամանք, որ արմատական նշանակութիւն ունի գործի աջողութեան համար, և որի վրա անհրաժեշտ ենք համարում հրաւիրել հասարակութեան ուշադրութիւնը: Այդ հանգամանքը իրագործութեան խնդիրն է, գործնական կեանքի վերաբերմունքն է դէպի զանազան ծրագիրներ և առաջարկութիւններ:

Արդարև ինչ նշանակութիւն կարող են ունենալ հասարակական կեանքի բարւոքման համար մշակված ամենալաւ ծրագիրներ, եթէ նրանք չը պէտք է իրագործվեն. ով կը համաձայնի ժամանակ, աշխատանք, եռանդ և աշխոյժ գործ դնել հասարակական առօրեայ մի խնդրի վրա, որ ոչ մի գործնական հետևանք չը պէտք է ունենայ:

Դուք լուրջ ջանքեր էք գործ դնում, դիցուք, պարզելու վարչական անկարգութիւնների և անկանոնութիւնների վնասակարութիւնը, ապացուցանում էք կօնարօրի և համարաւութեան անհրաժեշտութիւնը, մշակում էք կալուածական բարեփոխութիւնների մի նախագիծ, բացատրում էք օրինականութեան և կանոնաւոր գործավարութեան նշանակութիւնը, առաջարկում էք դպրոցական, վարչական, ընդհանուր հասարակական բարեփոխութիւնների մի ամբողջացրած ծրագիր, և սպասում էք, որ կեանքի մէջ սկսվի իրագործութիւնը:

Եւ սակայն, իրականութիւնը բոլորովին հակառակ պատկեր է մեր առաջ դուրս բերում: Այն ժամանակ, երբ դուք պահանջում էք կարգ, կանոն, կօնտրօլ, հաշուետուութիւն, օրինականութիւն, այդ իսկ ժամանակ տեսնում էք, որ հէնց դրա հակառակ գործերը յանձնվում են այնպիսի անձանց, որոնք իրանց գործունէութեամբ ոտի տակ են տալիս բոլոր ձեր պահանջները: Այն ժամանակ, երբ դուք պահանջում էք խելացի տնտեսութիւն, կրթված ժողովրդական հովիւներ, կրթական կազմակերպութեան բարեփոխութիւններ, այդ նոյն միջոցին խրախոյս են տանում անձեր, որոնք ոչ կալուածներ կարող են կառավարել, ոչ ժողովուրդ հովուել, ոչ կրթութեան գործը առաջ տանել:

Այդպիսի հանգամանքներում կանոնաւոր առաջադիմել չէ կարող հասարակական զարգացման գործը. լուրջ մտածող և անկեղծ գործող անձեր կը թուլանան և կը քաշվեն ասպարէզից, ծրագիրների և խնդիրների մշակութիւնը կանգ կառնի և անշարժութիւն կը տիրի հասարակական կեանքի մէջ:

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(Ռուսաց գործակալութեան)

—

Կ. Պոլիս, 3 սեպտեմբերի: Բ. Դուռը բանաւոր յայտարարութիւն ուղարկեց դեսպաններին, ասելով թէ ինքն երկիւղ է կրում, որ հայերը նոր յանցաւոր փորձեր կանեն, և այդ պատճառով առաջարկում է դեսպաններին զինուորական պաշտպանութիւն: Բացի դրանից, Բ. Դուռը դիմեց դեսպաններին, խնդրելով ուղարկել ոստիկանական վարչութիւնը հիւպատոսական պաշտօնեաներ՝ խուզարկութիւններին մասնակցելու համար օտարահպատակներին պատկանող տների մէջ, ուր, որպէս հիմք կայ ենթադրելու, թաղված են հայերը:

Վիեննա, 5 սեպտեմբերի: Կ. Պոլսից հաղորդում են, որ իրաւէ հրատարակվեց, որով զինուորական դպրոցն են ընդունվում քրիստոնեայ 20 երիտասարդներ: Դա առաջին անգամն է, որ քրիստոնեայ երիտասարդները ընդունվում են զինուորական դպրոցում:

Կ. Պոլիս, 5 սեպտեմբերի: Այստեղի դիպլոմատիական շրջաններում ոչինչ նշանակութիւն չեն տալիս այն սպառնական նամակին, որ նորերս դեսպանները ստացան հայկական կոմիտեից: Այդ շրջաններում խիստ կասկածում են, թէ կոմիտեաը հնարաւորութիւն կունենայ իրագործել իր սպառնալիքը:

Կ. Պոլիս, 5 սեպտեմբերի: Սեպտեմբերի 3-ին, մի աննշան առիթով, սարսափ տարածվեց Պերայում, Ղալաթիայում և Սամբուլում: Ոստիկանութեան և զօրքերի խելացի վարմունքը նպաստեց շուտով կարգի վերականգնման:

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

—

Պետերբուրգի թիւրքաց դեսպանը ուղարկել է «Новое Время» լրագրին հետեւեալ պաշտօնական հաղորդագրութիւնը.

«Կ. Պոլսում կարգ և խաղաղութիւն պահպանելու նպատակով, թիւրքաց կայսերական կառավարութիւնը որոշել է քշել հայրենիք բոլոր կասկածելի անձանց, և որպէս զի հնարաւորութիւն չը տրվի վերջիններին մայրաքաղաքը վերադառնալու փորձ անել, Բ. Դուռը ուղարկել է գաւառական իշխանութիւններին պաշտօնական հրաման սաստիկ հսկողութիւն ունենալ նրանց վրա:

«Սակայն մի քանի ad hoc յանձնաժողովներ, բաղկացած զինուորական, ներքին և ոստիկանութեան մինիստրութիւնների պատուիրակներից, կուղարկվեն այն նաւահանգիստները, որտեղ պէտք է յիշեալ անձինք ափ իջնեն: Այդ յանձնաժողովներին հրամանագրված է հսկել ոստիկանական պաշտօնեաների գործունէութեան վրա նաւահանգիստներում և ստուգել անցագիրները: Ով որ անհոգութիւն ցոյց տայ այդ առարկայի մասին, սաստիկ պատժի կենթարկվի:

«Որովհետև հնարաւոր է երևում, որ հայրենիք արտաքսվող անձանց մէջ կարող են անարխիստներ լինել, և վերջիններս պէտք է ձգտեն նոր յանցանքներ գործելու ռումբերի և դինամիտի միջոցով, ուստի օսմանեան իշխանութիւններին հրամայված է խիստ քննութեան ենթարկել նաւահանգիստները մտնող ամեն տեսակ ապրանքները, ինչպէս և դեղատներում գտնվող նիւթերը և ամեն տեսակ էական միջոցներ ձեռք առնել յեղափոխական փորձերը խափանելու, կարգը խանգարողներին դիմադրելու և հասարակական ապահովութեան վտանգ սպառնացող ամեն բանի առաջն առնելու համար: Միջոցներ են ձեռք առնված նոյնպէս խափանելու, որ օսմանեան կայսրութեան սահմանները չը մտնեն Բոլգարիայում և արտասահմանում գործող հայ յեղափոխական կոմիտէների գործակալները:»

Դժուար թէ այսպիսի «հերքումներով» թիւրքաց կառավարութիւնը կարողանայ համոզել Եւրոպային, թէ նա, արդարև, մտադիր է կարգ և խաղաղութիւն հաստատել:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

—

«Средне-Азіатскій Вѣстникъ», научно-литературный журналъ. Ташкентъ, 1896.

Ժամանակը հրաշքներ է ցոյց տալիս: Միջին Ասիայում, Լանկթամուրների, Զարմաղանների և այլ այսպիսի պատմական հրէշների հայրենիքում, ուր դարեր առաջ աշխարհներ քանդելու և արեան ծովերի մէջ խեղդելու մասին էին մտածում, այժմ հրատարակվում է ամսագիր, որի մաքուր տպագրութիւնը, արտաքին գեղեցկութիւնը և հետաքրքիր բովանդակութիւնը կարծել են տալիս թէ այդ երկրի վրայով անցել են խաղաղ կուլտուրական զարգացման դարաւոր շրջաններ: Բայց Ցաշկենտը, ուր գործում է այդ մամուլը, ռուսները նուաճել են ընդամենը 30 տարի առաջ, 1865 թ-ին: Դրանից առաջ այդ երկիրը ներկայացնում էր մահմեդական բարբարոս ֆանատիկոսութեան մի կենտրոն:

Ամսագիրը գլխաւորապէս նուիրված է երկրի ուսումնասիրութեան: Գլխաւոր առարկան, ի հարկէ, պիտի լինի մահմեդական կրօնը և նրա գործած ազդեցութիւնը երկրի տնտեսական և

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՎԵՐՋԻՆ ՇՈՒՆՉ

(Գիւղական ուսուցչի օրագրից)

—

Բարեկենդանը մօտենում էր: Մառախուղն այնպէս էր պատել Վ... գիւղը, որ գետնափոր տները բոլորովին անտեսանելի էին. մաղում էր մանր ձիւնը, որը մառախուղի խոնաւութեան մէջ հալվում էր ու կաւահողից գոյացած ցեխը անանցանելի դարձնում: Յուրա քամին էլ միւս կողմից էր արգելում տնից դուրս գալը: Աւելորդ է նկարագրել գիւղական ուսուցչի դրութիւնը այդ եղանակին: Մոռացայ ասել, որ օրը կիրակի էր: Կարդալ ու գրել չէ կարելի այդպիսի եղանակին. լոյսի պակասութիւնը մի կողմից, եղանակի վատութիւնը միւս կողմից խլում են մարդուց պարապմունքի հնարաւորութիւնը:

Ժամի 10-ն էր: Վառարանի տաքութիւնը թմրեցրել էր ինձ. մի տեսակ տաղակութիւն էի զգում. գիրքը վազուց ընկել էր ձեռքիցս սեղանի վրա: Մաքերի մի անվերջանալի խաօս էր տիրում գլխումս:

Սենեակիս դրան բացվելու ձայնը սթափեցրեց ինձ:

—Վարժապետ, դատաւորը խնդրեց, որ մի քանի րօպէով գաք Օհանէսց Ալէքսանի տունը, ասաց ներս մտնող գիւղացի երիտասարդը, իր ստած ձեռքերին փչելով:

—Ի՞նչ կայ այս եղանակին. չէր կարողանում ինքը գալ:

—Մի բան կայ գրելու, իրանք կարգը չը գիտեն. և էլ այնպէս մի գրագէտ մարդ չը կայ, որ գրէ. դրա համար շատ խնդրեց, որ նեղութիւն կրէք գալ:

Պէտք է ասել, որ գիւղական ուսուցիչը, եթէ ուզում է մի քանիսների համակրութիւնը գրաւել, պէտք է գրագրի պաշտօն էլ կատարէ. ես ակամայ վերկացայ, մտածելով, որ, եթէ մի քիչ ցուրտ օդ չնչեմ, գուցէ կարողանամ յետոյ մի բանով զբաղվել:

Դուրսը սկսվել էր սաստիկ փոթորիկ. քամին այնպէս էր փչում ու սառ ձիւնը մեր երեսովը տալիս, որ կարծում էի, թէ անապատում սամումի եմ պատահել և երեսիս կպածը ոչ թէ ձիւն է, այլ աւազ: Ես գնում էի առաջնորդիս հետքերով, որովհետև սաստիկ ցեխ էր: Հայ գիւղերը փողոցներ չունեն. իսկ եղածներն էլ այնքան ցեխացած են լինում այսպիսի ժամանակ, որ մարդ աւելի լաւ է համարում կըտուրներով գնալ: Մի քանի կտուրներից անցնելով, մենք հասանք Օհանէսց Ալէքսանի գետնափոր տնակին: Այդպիսի խրճիթին տեղացիները «դարաղամ» (սև տուն) անունն են տալիս: Եւ իրաւ, սև տուն: Դարաղամը չինված է լինում գետնի մէջ, չունի ոչ մի պատուհան, և միայն երդիկն է, որ ծառայում է թէ ծխահանի, թէ պատուհանի, իսկ երբեմն էլ դրան տեղ: Ցան մէջտեղը չինված է օջախը. սա թէ խոհանոց է, և թէ վառարան. ծուխը, տարածվելով տան մէջ, անշարժանում է երկար ժամանակ, սևացնում է պատերը, առաստաղը: Այս պատճառներով է նա սև տուն կոչվում:

Մենք ներս մտանք: Ես տան մէջ գտնվողներին իսկոյն չը նկատեցի.—օջախից բարձրացող թանձր մուխը խիտ-խիտ նստել էր տան մէջ, խեղդում էր, անտեսանելի էր դարձնում ամեն բան: Վերջապէս մթութեանն ընտելանալով, աչքերս քիչ ճմռելուց յետոյ, օջախի մօտ նկատեցի մի անկողին. նրա մէջ պառկած էր ինքը, Ալէքսանը,—վախտանամեայ մի ծերունի դժգոյն դէմքով և խոր ընկած աչքերով: Նրա այտերի ոսկորները ցցվել էին. նրա հաղիւ լսելի շնչառութիւնը և կապտած շրթունքները յայտնում էին, որ խեղճը մահվան դէմ վերջին կռիւն է մղում. նրա աչքերը փակ էին ու անշարժ: Ցան միակ աշխատաւոր ձեռքն էր դա: Օջախի միւս կողմում նստոտած էին գիւղի դատաւորը և տեղացի յայտնի հարուստ Գրիգորը: Դատաւորը գէր, կոլոր ու կարմիր վզով, և վարդագոյն դէմքով մարդ էր, բաւական հաստափոր: Արեան առատութիւնից էր, թէ չարութիւնից նրա աչքերը արիւնոտ էին ու փայլուն:

Նա հագած էր բրդէ հաստ չուխայ ու վրայից ծածկած ասիական վերարկու: Իսկ Գրիգորը, ընդհակառակը, նիհար ու դեղնած դէմքով երեսնամեայ մի երիտասարդ մարդ էր. նա հագած էր հին, դեղնած մահուդէ չուխայ, իսկ գլխին ծածկել էր նոյն գոյնի, մի քանի տեղից կարկատած, ֆուրաժկա: Գիւղացիները նրան առասպելական հարստութեան տէր էին համարում. նրա մասին պատմում էին, որ նա թէ իր արտերից ստացած և թէ ուրիշներին տուած փողի տոկոսի փոխարէն հաւաքած ցորենը ծախում էր, կամ աւելով փոխ տալիս, իսկ իր 80 ամեայ մօրը, կնոջը և նոյն իսկ իրան գարու հացով էր կերակրում: Նա անզաւակ էր, բայց չարունակ փող էր դիզում: Նա ունէր խաղողի վեց այգի,—բոլորն էլ պարտքի տեղ վերցրած: Գիւղացիները մի-մի պատմում էին Գրիգորի վաշխառութիւնների մասին, բայց և այդպէս, ամենքն էլ մի տեսակ ակնածութեամբ ու պատուով էին վերաբերվում դէպի նրան, որովհետև դեռ ոչ ոք կարիք ունեցած ժամանակ դատարկ ձեռքով յետ չէր դարձել Գրիգորի մօտից: Բացի դրանից, եկեղեցու երէցփոխան էր նա. թէ որքան եկամուտ ունէր եկեղեցին, այդ չը գիտէին, որովհետև Գրիգորը սովորութիւն չունէր հաշիւ տալ եթէ ոչ իր խղճին, գոնէ գրսեցիներին: Ինքատէր քահանան առանց Գրիգորի համրիչի մկրտութիւն, պսակ ու թաղումն չէր կատարում: Նա գիւղի հարկահանն էլ

մտաւոր առաջադիմութեան վրա։ Ամսագրի առաջին գրքերում մենք տեսնում ենք իսլամի թէօլօգիական, իրաւաբանական և սոցիօլօգիական ուսմունքների քննադատութիւնը, որ գրել է Ն. Դինգելչտեդտ։ Նոյն իսկ մեր մէջ կան մարդիկ, որոնք մոլորված են այն վայրիվերոյ թէօրիայով որպէս թէ իսլամը կարող է պաւաստել իր մէջ ժամանակակից քաղաքակրթութիւնը. այդպիսիներին խորհուրդ ենք տալիս կարդալ այդ գեղեցիկ ուսումնասիրութիւնը, որ ցոյց է տալիս թէ որքան քարացած ու մեռած է այդ կրօնը, որ հարիւրաւոր միլիոն մարդկանց համար երկնքի խօսք է և սրբութիւն սրբոց։ Շատ հետաքրքրական են նաև հնագիտական խուզարկութիւնները, որոնք, պէտք է ասել, նոր լոյս կը սփռեն մոնղոլների մի ժամանակ սարսափելի երկրի վրա։ Ի միջի այլոց յիշենք, որ ամսագրի վերջին գրքոյկի մէջ յոյս է յայտնված, որ կարելի պիտի լինի գտնել այն մեծ գրադարանի հետքերը, որը, ինչպէս յայտնի է մեր պատմագիրներից, տարել է Լանկթամուր Հայաստանից։

Ամսագրի մէջ պատահում են նոյն իսկ գեղարուեստական գրուածներ. կայ մի վէպ տեղական կեանքից, մինչև անգամ և ոտանաւոր։— Այո, հրաչքը կատարվում է, թէև շատ դանդաղ կերպով. և պէտք է, պէտք է հաւատալ, որ լինելու են ժամանակներ, երբ քրիստոնէական քաղաքակրթութիւնը ծաղիկներ կը տնկէ այն թշուառ հողերի վրա, որոնց այժմ այրել, խորովել է և մահի հայրենիք է դարձրել մահմեդական արիւնածարաւ տիրապետութիւնը։

Լ.

ՆԱՄԱԿ ՇՈՒՇՈՒՑ

Սեպտեմբերի 1-ին

Մեր գաւառի գիւղական ուսուցիչները դեռ ևս իրանց ռոճիկները չեն ստացել, մինչև անգամ նրանք, որոնց դասաւորութիւնը մինչև տարվայ վերջը չարունակվել է։ Այս խեղճերը, չը կարողանալով մի քան հասկացնել հոգաբարձուներին, դիմել են Թեմիս կառավարչին, որին ներկայանալու համար հարկադրված են եղել մի քանի անգամ մտնել կօնսիստորիայի բակը և ժամերով կանգնելուց յետոյ՝ յուսահատ վերադառնալ, ստանալով պատասխան, թէ ոչ ոքի չէ ընդունում։ Վերջապէս, եթէ մէկը հաղիւ հազ բաղդ է ունենում ներկայանալու և իր դրութիւնը յայտնելու, պատասխան է ստանում թէ՝ «այժմ ժամանակ չունեմ, վաղը եկ»։ Այս «վաղը եկն» էլ մի քանի անգամ կրկնվելուց յետոյ, կառավարիչը բարեհաճում է պատասխանել, թէ այդ մասին հրամանագրել եմ կենտրօնական գործակալին։ Վարժապետը չտապում է գիւղը.

—Օրհնեա տէր։—Աստուած օրհնէ...

—Ցէր-հայր, Թեմի կառավարիչն ասեց, որ ձեզ հրամանագրված է իմ ապառիկ ռոճիկի մասին, խնդրում եմ չուտով հաւաքէք և ինձ յանձնէք, որ ես կարողանամ մի գործ գտնել։

Գործակալը պատասխանում է. «Հա... հրամանագրված է, բայց այժմ ժամանակ չունեմ, որովհետև գրանից աւելի սաստիկ հրաման կայ, որ առաջնորդի ձիու համար գարի հաւաքեմ, որովհետև ձին առանց գարու է մնացել։ Առաջարկում եմ գալ մի ամսից յետոյ, երբ կալերը վերջացած կը լինեն։

Երկար թախանձանքներից յետոյ, գործակալը պատիրում է ուսուցչին գնալ այն գիւղը, ուր եղել է ուսուցիչ և սպասել իրան. «Ես վաղը եթէ չը գամ, միւս օրը առաւօտեան անպատճառ այնտեղ կը լինեմ»։

Վերջին անգամ, ինքն իրան սիրտ տալով, վարժապետը գնում է իր պաշտօնատեղին։ Սպասում է մի օր, երկու, երեք, վերջապէս չորս օր. գործակալը չը կայ, իսկ չորս օրից աւել չէ կարելի հիւր մնալ մի տան մէջ. առանց փողի տան վերադառնալն էլ անկարելի է։ Դարձեալ վազում է քաղաք. նորից ներկայանում է բարձրապատիւ կառավարչին (այս անգամ մեծ բաղդաւորութիւն է ունենում առաջին անգամից ընդունվելու)։ Պատմում է, բայց ստացածը յանդիմանութիւն է, թէ ինչու մինչև գործակալի գալը չէ սպասել, իսկ վերջը «աչքիս այլ ես չերևաս» հրաժեշտը տալով, վռնդում է։

Հարց է. այնուհետև ուր գնայ գիւղական վարժապետը։

Ուսուցիչ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Ախալքալաք, օգոստոսի 11-ին

«Մշակի» 92-րդ համարում Ախալքալաքից գրված՝ Ջ. Տ. Գ. ստորագրութեամբ թղթակցութեան մէջ, ի միջի այլոց մի նկատողութիւն կայ իմ մասին. ճշմարտութիւնը վերականգնելու համար, խնդրում եմ տպագրել հետևեալ բացատրութիւնը։ Ուղիղ է, ես եղել եմ հոգաբարձու և վարել եմ այդ պաշտօնը 4—5 տարի, բայց ոչ մի տարի դրամական հաշիւ չեմ կատարել և ոչ էլ պահել. այդ բանը կատարել է մեր ընկերների միջից ընտրված մի ուրիշ հոգաբարձու, ինչպէս կարող են վկայել իմ ընկեր հոգաբարձուները, գործակալը և այստեղի նախկին ուսուցիչները։ Վերջին հոգաբարձական ընտրութիւնից յետոյ (կարծեմ 1893 թ.) ծախսարար հոգաբարձուի կազմած և հոգաբարձութիւնից ճշդված հաշիւները, ուսումնարանի գոյքի հետ միասին, յանձնվել են նոր հոգաբարձութեան անպակաս, առանց մի տարակուսանքի, ինչպէս կը վկայեն գործերի մէջ եղած արձանագրութիւնը, մատեանները և հաշիւները, որոնք վաւերացրված են նոր հոգաբարձութեան ստորագրութեամբ։—Գալով երկրորդ կէտին, այն է գեղատատութեան հաշուետուութեան, պէտք է ասեմ, որ այդ հաշիւները, որոնք միշտ պատրաստ են եղած և կարդին, դեռ ես անցեալ տարի հասարակութիւնից ընտրված հաշուատեսները, մօտաւորապէս 14 հոգի, գտան ճիշդ և անսխալ, առանց մի տարակուսանքի, վաւերացրին իրանց ստորագրութեամբ և յանձնեցին գեղատատին, որի մասին նոյնպէս կարող են վկայել պ. գեղատատը և հաշուատեսները։ Իսկ ինչ վերաբերում է իմ ռոճիկս մնացորդին, որը մօտ 300 ռուբլի էր, այդ գումարը, զիջանելով պ. պ. հաշուատեսների խնդրին, թէ քաղաքը աղքատ է և պէտքերը շատ, ընծայեցի հասարակութեանը։

Յովհաննէս Յարութիւնեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Շարունակում ենք տպագրել մեր ձեռքը հասած տեղեկութիւնները Շուշու թեմական դպրոցի մասին։ Հոգաբարձութիւնը, ստանալով Էջմիածնից հեռագիր այն մասին, որ ուսուցչական խումբ կազմելու իրաւունքից զրկվում է թէ ինքը և թէ ընտրված տեսչի պաշտօնակատար Մէլիքեան, հարկաւոր է համարել համակերպվել իր այդ նոր դրութեան, և օգոստոսի 31-ին ուղարկել է ամենայն հայոց Կաթողիկոսին հետևեալ հեռագիրը. «Մէլիքեան հրաժարվեց։ Հոգաբարձութիւնը, նկատի առնելով, որ ուսումնական տարին սկսվել է, նոր աշակերտների ընդունելութիւնը ժամանակաւորապէս յանձնել է աւագ-ուսուցիչ (?) Զօհրաբեանին և դրա հետ թախանձագին խնդրում է Ձեր Վեհափառութիւնը՝ տեսուչ նշանակել Մեսրոպ վարդապետ Տէր-Մովսէսեանցին, որովհետև անհրաժեշտ է անպատճառ կազմակերպել ուսուցչական խումբ»։ Այդ հեռագրին չէ ստորագրել Սաթունեան վարդապետը, որը գրաւոր կերպով բացատրել է, թէ իրան յայտնի է, որ Վեհափառը տեսչի պաշտօն առաջարկել է Մեսրոպ վարդապետին, բայց նա հրաժարվել է։ Եւ իրաւ, Շուշում էլ մի չաթթ առաջ տարածված էր լուր, թէ գալիս է Մեսրոպ վարդապետը. յետոյ լսեցին, որ նա հրաժարվել է այն պատճառով, որ զրկված է ուսուցչական խումբ կազմակերպելու իրաւունքից։ Պէտք է ասել, որ հոգաբարձութիւնը վաղուց էր ունեցել Մեսրոպ վարդապետին իր կանդիդատների ցուցակի մէջ, բայց ստիպված էր հանել նրան այդ ցուցակից, ինչպէս հանել էր ուրիշ շատերին, այն պատճառով, որ խոհեմութիւն էր համարում յարմարվել Սաթունեան վարդապետի անձնական տրամադրութեան և ցանկութիւններին, և տեսուչ չը հրաւիրեց այն բոլոր մարդկանց, որոնց այդ վարդապետը չէր բարեհաճում հաւանել։ Այժմ, երբ հոգաբարձութիւնը իր յուսահատական դրութիւնից դուրս գալու միակ ելը համարում է Մեսրոպ վարդապետին հրաւիրելը, Սաթունեան շարունակում է իր կամքը և հաճոյքը թելադրել հոգաբարձութեան։ Եւ որովհետև Էջմիածինը այդ վարդապետի խորհուրդներով է ղեկավարվում և ամեն անգամ նրան է հարցնում, ուստի ոչ մի հաւանականութիւն չը կայ, որ Մեսրոպ վարդապետը նշանակվի տեսուչ։ Թէ ինչ կը լինի այդ բոլորի վերջը—կարող է իմանալ, ի հարկէ, միայն Նահապետ վարդապետը։ Ահա կարգեր..

—

Ֆինանսների մինիստրութիւնը շրջաբերականով պատիրել է բոլոր գանձարաններին դադարեցնել փող ստացողներին երեք և մի ռուբլիանոց թղթադրամներ տալը և նրանց փոխարէն ոսկի կամ արծաթ փող տալ։ Երեք և մի ռուբլիանոցները պէտք է ուղարկվեն պետական բանկը ոչնչացնելու համար։ Ուրեմն, մի քանի ժամանակից յետոյ ամենափոքր թղթադրամը կը լինի հինգ ռուբլիանոցը։

—

Հարկաւոր ենք համարում հրատարակել մի տգեղ փաստ, որ ցոյց է տալիս, թէ հայոց նոյն իսկ կօլլէգիալ հիմնարկութիւնները զուրկ են շատ տարրական հասկացողութիւններից։ Ամենքը գիտեն, որ եթէ մէկն ուզում է հերքում տալ լրագրի մէջ, նախ պէտք է դիմէ խմբագրութեան, և երբ վերջինս դրականապէս կը մերժէ տպագրել, այն ժամանակ միայն նա կարող է դիմել ցէնզուրական կօմիտէին՝ օրէնքի տրամադրութիւնից օգտվելու համար։ Այդ հասարակ բանը չը գիտէ Շուշու կօնսիստորիան։ «Մշակի» № 98-ի մէջ մենք անփոփոխ տպագրեցինք կօնսիստորիայի «հերքումը» Գանձասարից գրված թղթակցութեան դէմ։ Այդտեղ էլ մենք ցոյց տուինք, թէ ինչ երեխայական լոգիկա է նստած մեր տէրտէրների և վարդապետների մէջ, որոնք, չափազանց պատասխրութեան հովերից բռնված՝ իրանց թոյլ էին տուել սպառնալիքներով վախեցնել մեր թղթակցին։ Երկկ ցէնզուրական կօմիտէտը մի և նոյն հերքումի պատճէնն ուղարկեց մեզ՝ տպագրելու համար։ Բանից դուրս է գալիս, որ Գանձասարի թղթակցութիւնը այնքան յուզմունք է առաջացրել կօնսիստորիայի մէջ, որ շտապել են երևելի «հերքումը» ուղարկել մեզ, մի և նոյն ժամանակ, կարծելով, թէ մենք կը զրկենք մեզ այդ երեխայական սպառնալիքը ամբողջութեամբ տպագրելու բաւականութիւնից, պատճէնն ուղարկել են ցէնզուրական կօմիտէին։ Կօնսիստորիաների տարեգրութեան մէջ յայտնի չէ մի այդպիսի եռանդ. և եթէ նա մի ակնթարթում եռացման աստիճանին է հասել, այդ միայն կարող է մեզ ոգևորել, հատատալով, որ մեր թղթակիցը մատը ուղղակի դրել է ցաւեցնող տեղի վրա։ Խոստանում ենք անչէջ պահել այդ հարցրի ես։

—Մեր գիւղերում այդպէս ենք հաշուում. դէ, գիտես, վարժապետ, այստեղ քաղաք չէ, քաղաքում փող շատ է լինում, որտեղից ուզում են, կարողանում են պարաք գտնել. այստեղ ով որ 100 ռուբլի ունի, տարեկան նոյնքան էլ տոկոս պէտք է վերցնէ. փողը Աստուծու տեղ են պաշտում գիւղերում, ասաց դատաւորը ժպտալով։

—Լաւ, հիւանդից հարցրէք, տեսնենք նա համաձայն է 150 ռուբլի վճարելու, կամ իր այդին այդքան արժէ։

—Ալէքսան-ապէր, կանչեց դատաւորը, աչքերդ բաց, վարժապետը եկել է, ասա որ թուղթը գրէ։

Հիւանդը չարժվեց, աչքերը բացաւ կիսով չափ և ձեռքով նշան արաւ. համաձայնութեան նշան էր այդ, թէ մեր խղճին էր թողնում, չը կարողացաց գուշակել։ Կինը միւս կողմում լուռ արցունք էր թափում։

—Հիւանդը որոշ պատասխան չը տուեց. գոնէ հարցրէք կնոջը։

—Կինն իրաւունք չունի խառնվելու այս գործում, քանի որ տանտիրոջ չունչը բերանումն է, նա միայն իրաւունք ունի ծախելու։ Բայց խընդրում ենք չուտ գրել, ուրիշ գործեր էլ ունենք։

Ես մի բօսէ մնացի լուռ ու մտածութեան մէջ. երևակայում էի խեղճերի դրութիւնը, և ձեռքս ակամայ չէր հնազանդվում ինձ։ Այդ միջոցին կինը, որ մինչև այդ ժամանակ լուռ կուչ եկած էր իր անկիւնում, դարձաւ ինձ ու ասաց.

—Վարժապետ, եթէ դրանք խիղճ ունենային, չէին գայ այս բօսէին ու չէին ստիպի, որ պարաքը վճարենք, թէև այդ փողից միայն 30 ռուբլի ենք ստացել. բայց մի և նոյն է, գրիր, աւելի լաւ է 30 ռուբլու տեղ 150 ռուբլի տանը, քան թէ մեր հոգին միւս աշխարհում պարտական մնայ. խնդրում եմ, գրիր։

Ես գրեցի։

Հիւանդը վերջին չունչի վրա էր։ Նրանից յետոյ տասնամեայ փոքրիկ որդին և մաշված ու հիւծված կինը պէտք է մնային առանց մի կտոր հացի։

Թշուառներ...

Նոր նկատեցի Գրիգորի ու դատաւորի աչքում մի բաւականութեան ու հանգստութեան նշան։

—Գրիգոր, դէհ մի հինգ մանէթ էլ տուր իրանց, խեղճ են, ասաց դատաւորը ցաւակցական ձայնով։

Գրիգորը մեծ բաւականութեամբ հանեց հինգ ռուբլի և տուեց հիւանդի կնոջը։

Ես անճարի պէս դուրս գնացի։

Միւս օրը Ալէքսանը մեռաւ, բայց մինչև այդ՝ նրա այդին, որ 200 ռուբլի արժէր, 150 ռուբլու տեղ անցաւ Գրիգորին, որը միայն 30 ռուբլի էր տուել։ Ալէքսանի թաղման վրա ծախսեցին Գրիգորի տուած հինգ ռուբլին և գիւղացիները նրան երկար կեանք մաղթելով՝ մեծ բաւականութեամբ պատմում էին այդ բարեգործութեան մասին։

Սուրէն

—Ի՞նչ թուղթ։

—Դէ տեսնում ես, Ալէքսան-ապերը ինչ դրութեան մէջ է. Աստուած մի արասցէ, գուցէ գլուխը մի փորձանք է գալիս. մի քանի մանէթ է տալու Գրիգորին, ասում ենք վերջացնենք, որ իրան հոգին էլ հանգիստ լինի։ Է՛հ... աշխարք է էլի... ասաց դատաւորը ու դարձեալ մի հառաչ արձակեց։

—Լաւ, թող վերջացնէ, էլ դրա համար ինչ թուղթ է հարկաւոր։

—Ախր Ալէքսան-ապերը այնքան կարողութիւն չունի, որ փող տայ. երկու այդի ունի, ասում ենք մէկը տայ, իր հոգին ազատէ. այն միւսն էլ իրան բաւական է. լաւ է մարդ քաղցած լինի, քան թէ հոգին պարտական թողնէ։

—Ինքը համաձայն է։

—Համաձայն չեղած ինչ պէտք է ասի։

Ամբողջ այս խօսակցութեան ժամանակ Գրիգորը տխուր դէմք առած՝ հետևում էր դատաւորի արտասանած խօսքերին։

—Ո՞րքան է պարտքը, հետաքրքրվեցի ես։

—Պարտամուրհակը այստեղ է, ասաց դատաւորը, ձեռքը մեկնելով դէպի Գրիգորը։

Վերջինս «զալուխից (մի տեսակ փողի քըսակ է) հանեց մի դեղնած և ծալքերը կոտորած թուղթ։ Պարտքը 60 ռուբլի է եղել, ժամանակից երեք տարի էր անցել, և թղթի տակ դատաւորի ստորագրութեամբ աւելցրած էր, որ մայր գումարը տոկոսների հետ 150 ռուբլի է։

—Մինթէ 90 ռուբլի է տոկոսը, զարմանալով

եռանդը կոնսիստորիայի մէջ։ Դրա համար մենք կը չարունակենք երեան հանել զան ճշմարտութիւններ, իսկ պակասը լրացնելու համար— անփոփոխ կը տպագրենք կոնսիստորիայի հերքումները։ Եւ եթէ կոնսիստորիան ուզում է անփոփոխ տպված «հերքումների» դառնութիւնից ազատ մնալ, թող իր հերքումները ուղարկէ մեզ ցէնզուրական կոմիտէի միջոցով։ Այսպէս, եթէ մենք ժամանակին չը տպէինք հերքումը, այլ սպասէինք կոմիտէի կարգադրութեան, Շուշու կոնսիստորիան երբէք մխիթարութիւն չէր ունենայ տպած տեսնել մեր լրագրի մէջ իր երեխայական սպառնալիքը այն մասին, թէ ինքը դատարանին կը դիմէ, եթէ տան օրվայ ընթացքում նրանից ներողութիւն չը խնդրեն։

—

Մեզ հաղորդում են, որ Անդրկովկասից Նիժնի-Նովգորոդի ցուցահանդէսը տարած չվճարական պանիրները՝ համեմատած Ռուսաստանի ներքին նահանգներում պատրաստած նոյն տեսակ պանիրների հետ՝ այնքան բարձր յատկութիւն են ունեցել, որ ցուցահանդէսի վարչութիւնը որոշել է Անդրկովկասի պանիրները չը գնահատել ներքին նահանգների պանիրների հետ, այլ առանձնացնել, որպէս զի միւս պանիրները բոլորովին չը զրկվեն բարձր պարգևներից։ Վերջնականապէս դեռ չէ հաստատված մինչև այժմ, թէ ինչ պանիր ինչ գնահատութիւն է ստացել։

—

Վերջերս հաւաքած նոր վիճակագրական տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ Ռուսաստանում խուլ և համր անձերի թիւը հասնում է 56,000-ի, իսկ կոյրերի թիւը՝ 200,000-ի։

—

Այս օրերս Վիէննայի Միխիթարեան տպարանից դուրս եկաւ հայերէն ձեռագիրների ցուցակը, որի տպագրութիւնը սկսվեց դեռ անցեալ տարի մայիսին։ Ինչպէս հաղորդում է «Հանդէս Ամսօրեայ», այդ երկասիրութիւնը պարունակում է 1500 էջ և 573 ձեռագիրների նկարագրութիւն։ Գիրքը ունի և գերմաներէն մասն, որ նշանակված է գերմանական գիտնականների համար։ Սեպտեմբերի կէսին կուղարկվի բաժանորդներին։ Ոչ բաժանորդների համար գինը նշանակված է 23 ռուբլի։

—

Մեզ հաղորդում են, որ պ. Եկմալեանի ներդաշնակած պատարագի երգեցողութեան տպագրութիւնը Լէյպցիգում աջողութեամբ առաջ է գնում։ Պարտիտուրը, 262 երես, արդէն տպագրված է, քիչ ժամանակում էլ առանձին ձայները կը տպագրվեն։ Այս ընդարձակ գործը տպագրել յանձն առաւ ձեռնտու պայմաններով Բրէյդկոպֆ և Հէրտէլ հռչակաւոր ֆիրման, որ և յատկապէս այս նպատակով փորագրել տուեց երկու տեսակ հայերէն տառեր։ Գրքի վերնագիրը, հայերէն և ֆրանսերէն առաջաբանը և հայերէն բնագրի ֆրանսերէն թարգմանութիւնը, ընդամենը 20 երես, տպագրվեցին Վիէննայում։ Թէ բնագիրը և թէ ձայնանիշները մեծ խնամքով են տպագրվել և շատ գեղեցիկ են։

—

Վիէննայի ռուսաց դեսպան կոմս Կապնիստ, ինչպէս հաւատացնում են այնտեղի լրագիրները, շուտով Պարիզ է գնում, և կը գտնվի թագաւոր Կայսրի այնտեղ լինելու ժամանակ։ Նոյն լրագիրները, նոյնպէս և գերմանական ու ֆրանսիական մամուլի շատ օրգաններ պնդում են, որ կոմսը, երևի, կը նշանակվի արտաքին գործերի մինիստր։

—

ԹԷԼԱՒԻՑ մեզ գրում են. «Օգոստոսի 27-ին, Թէլաւի հայոց դպրոցների դահլիճում մի պարերեկոյթ կայացաւ, յօգուտ Բարեգործական ընկերութեան Թէլաւի ճիւղի, կենդանի պատկերներով։ Զուտ արդիւնք մնաց 77 ռուբլի»։

—

ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ մեզ գրում են. «Գողերի յանդգնութիւնը հասել է այն աստիճանի, որ քաղաքից էլ են ձիեր գողանում։ Մօտ օրերս գողացան երկու ձի, որոնցից մէկը պատկանում էր մի հայ պաշտօնեայի, իսկ միւսը— մի թուրք կալուածատիրոջ»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Ուինալ անունով մի անգլիացի նորերս հրատարակել է մի գիրք «Armenia and its Sorrows» վերնագրով, որին կցված է Գլադստոնի մի կարճ նամակը։ Նշանաւոր պետական գործողը ողջունում է Ուինալի ձեռնարկութիւնը, որով նա պէտք է արթնացնի հասարակաց ուշադրութիւնը արևելեան քրիստոնեաների վիճակի վերաբերմամբ։

—

«Nord» լրագրում տպված է. «Մի քանի անգլիական լրագիրներ համեմատում են Կրետէի հարցը հայոց հարցի հետ, գանգատվելով այն բանի դէմ, որ մեծ պետութիւնները չեն ցանկանում հայերի համար անել այն, ինչ որ նրանց աջողվեց անել կրետացիների համար։ Այդ երկու հարցերի մէջ, սակայն, մեծ զանազանութիւն կայ։ Կրետացիները արդէն ազատ Յունաստանի մասն էին կազմում և նրանց կղզին վերադարձվեց Թիւրքիային 1830 թվի Լօնդօնի արձանագրութեամբ, Էվրէյի փոխարէն։ Բացի դրանից, կրետացիները ունէին Հալէպօի պայմանագիրները, որոնք հիմք ծառայեցին կղզու այժմեան դրութեանը։

«Ինչ վերաբերում է հայերին, մեծ պետութիւնները դիտաւորութիւն չունեն երեսի վրա գցել նրանց, մինչև որ նախապէս մի քանի վարչական ռէֆորմներ ձեռք չը բերեն նրանց համար, ռէֆորմներ, որոնք, շատ կարելի է, հիմն կը դառնան այն բարենորոգումների, որոնք ապագայում կը շնորհվեն այն նահանգներին, որոնք Բ. Դրան անմիջական սեփականութիւն են կազմում։

«Հայոց հարցը ներկայումս մտքերի փոխանակութեան առարկայ է մեծ պետութիւնների և օսմանեան կառավարութեան մէջ»։

—

«Рус. Вѣд.» լրագրին հաղորդում են Կ. Պոլսից, որ վերջին անկարգութիւնների ժամանակ կոտորվածների թիւը 10,000-ից անցնում է։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԷՊՔԵՐ

—

Ամբողջ Եւրոպան այժմ հետևում է թագաւոր Կայսրի ճանապարհորդութեան։ Այլ ևս ոչ մի կասկած չը կայ, որ այդ ճանապարհորդութիւնը ունի քաղաքական մեծ նշանակութիւն և վճռական դեր պիտի կատարէ միջազգային խնդիրների ուղղութեան և լուծման մէջ։ Թէ Աւստրիայի մայրաքաղաքում և թէ Բրէսլավլում, գերմանական հողի վրա, թագաւոր Կայսրը գտաւ շատ շքեղ և սրտագին ընդունելութիւն. այդ միայն եւրոպական վեհապետների հիւրասիրութեան և քաղաքավարական յարգանքների արտայայտութիւն չէր, այլ և ցոյց էր տալիս մի և նոյն ժամանակ, թէ Ռուսաստանը, մանաւանդ վերջին տարիներս, իր ամէնի այժով և կորուկ, վճռական քաղաքականութեամբ ինչքան մեծ նշանակութիւն և հեղինակաւոր դիրք է ստացել արևմտեան Եւրոպայի աչքում։—Լրագիրների միաբերան վկայութիւնները հաստատում են, որ Վիէննայի այցելութեան ժամանակ ռուսաց և աւստրիական դիպլոմատիայի մէջ հաստատվել է մերձեցում, և երկու պետութիւնների արտաքին շահերը միանգամայն հաշտ և համերաշխ ընթացքի մէջ են դրված։ Թէև մի քանիսն ասում են, որ իշխան Լոբանով-Ռոստովսկու յանկարծակի մահը խանգարել է աւստրօ-ռուսական համաձայնութեան զարգացմանը, բայց բոլոր նշանները ցոյց են տալիս, որ երկու հարևան պետութիւնները այն աստիճան հասկացել են միմեանց, որ կարող են համերաշխ գործել, մանաւանդ միջազգային հարցերի այն շրջանում, ուր թէ Աւստրիան և թէ Ռուսաստանը ունեն մեծ շահեր։ Այդ շրջանը գլխաւորապէս գրկում է Արևելեան հարցը։ Ինչ վերաբերում է Գերմանիային, մենք ունենք Վիլհելմ կայսրի դրական և բացորոշ խօսքերը, որոնք հաստատում են, թէ Ռուսաստանի և Գերմանիայի մէջ բարեկամական և համերաշխ յարաբերութիւնները միանգամայն անկասկածելի են։ Վիլհելմ կայսրը Գերլիցում ասած իր ճառի մէջ հաւատացրեց, որ Ռուսաստանի և Գերմանիայի բոլոր ջանքերը ուղղած են դէպի այն նպատակը, որպէս զի «միացնեն Եւրոպայի բոլոր ազգերը ընդհանուր շահերի հողի վրա և պաշտպանեն ամենասրբազան բարիքները»։ Բացի դրանից, Վիլհելմ անուանեց Նիկոլայ Կայսրին Եւրոպայի խաղաղութեան և երջանկութեան պաշտպան։

Մարդկութիւնը, իր գերագոյն շահերը և երջանկութիւնը աչքի առաջ ունենալով, միմիայն ուրախանալ կարող է գերմանական կայսրի այդ խօսքերից, որոնք արտասանվեցին թէ Բրէսլավլի տեսակցութեան ժամանակ և թէ նրանից յետոյ։ Գերմանիան, պէտք է յուսալ, այժմ կը սկսէ անկեղծօրէն տոգորվել այն մտքով, որ ազգերի երջանկութեան համար կարելի է մտանալ շատ շահադիտական միաւումներ, և երբ այդ միտքը բոլորովին կը հաստատվի, այն ժամանակ բոլորովին ապարդիւն կը լինի երեքպետեան դաշնակցութիւնը, որ ուղղված է Ռուսաստանի և Ֆրանսիայի դէմ և որի հոգին է Գերմանիան։ Ինչպէս յայտնի է, Գերմանիան ստեղծեց պատերազմական ոյժի այն ահարկու հրէշը, որ կոչվում է միլիտարիզմ։ Եւրոպայի տնտեսական թշուառութեան պատճառն է այդ ահագին բանակները։ Միլիտարիզմի հոգուն արդէն զոհ է գնում երեքպետեան դաշնակցութեան անդամներից մէկը, Իտալիան, որ տնտեսական կատարեալ մնանկութեան է հասել։ Թէ միլիտարիզմի այս աւերիչ յատկութիւնը և. թէ այն հանգամանքը, որ Գերմանիան համոզվում է, թէ Ռուսաստանը միշտ պիտի հետևի խաղաղասէր քաղաքականութեան, արդեօք չէն ցոյց տալիս, որ ժամանակ է մտածել մի ընդհանուր զինաթափութեան մասին և դրանով ազատել ազգերի կուլտուրական զարգացումը մշտական և անյաղթելի խոչնդոտից։ Եթէ գերմանական կայսրը լոկ պերճախօսութեան մի ապացոյց չէ ուզեցել տալ Գերլիցի ճաշի ժամանակ, պէտք է, ուրեմն, սպասել, որ սիրուն խօսքերին կը հետևեն և սիրուն գործեր։

Գերմանական մամուլը միաբերան հաւատացնում է, որ արևելեան գործերի վերաբերմամբ Ռուսաստանը և Գերմանիան մի և նոյն հայեացքներն ունեն. կարծում են, որ Թիւրքիայի այժմեան պայմանները խաղաղ միջոցներով լաւացնելը մի խնդիր է, որ կարելի է լուծել, բայց դրա համար ժամանակ է հարկաւոր. և ոչ մի բան չէ կարող այնպիսի երաշխաւորութիւն լինել այդ դժուար հարցի լուծման, ինչպէս երկու կայսրների փոխադարձ վստահութեամբ լցված խորհրդակցութիւնները։—Յայտնի է, որ Ֆրանսիան միշտ համերաշխ է Ռուսաստանի հետ արտաքին քաղաքականութեան հարցերի մէջ։ Ուրեմն, ամբողջ ցամաքային Եւրոպան, որ իրաւունք ունի այս կամ այն ուղղութիւնը տալ արևելեան հարցին, մի ընդհանուր համաձայնութիւն արդէն կայացրել է։ Իսկ թէ ինչպէս կարտայայտվի այդ համաձայնութիւնը,—այդ ցոյց կը տայ մօտիկ ապագան։

Երեքպետեան դաշնակցութեան լրագիրները կարծում են, որ Ֆրանսիան էլ, իր հզօր դաշնակցի օրինակին հետևելով, կը ձուլէ իր շահերը ընդհանուր եւրոպական համաձայնութեան մէջ։ Այդ ակնկալութիւնը սիրելի է դարձնում նոյն իսկ երազական ցնորքներին նուիրվել։ Լօնդօնի լրագիրներից մէկն ասում է, որ Գերմանիան իր համաձայնութիւնը տալով Ռուսաստանին արևելեան հարցում, ստացել է այն օգուտը, որ Էլզաս-Լոտարինգիայի հարց չի լինի։— Միւս կողմից Վիէննայի լրագիրները դրականապէս հաստատել են աքնում, որ այժմ յայտնի է դարձել Ֆրանս-ռուսական դաշնագիրը. դա միայն պաշտպանողական դաշինք է. Ֆրանսիան և Ռուսաստանը պարտաւորվել են միմեանց օգնել միայն այն դէպքում, երբ նրանցից մէկը կենթարկվի մի ուրիշ պետութեան արշաւանքին, իսկ միասին արշաւանք սկսել մի պետութեան դէմ՝ չեն պարտաւորվել։ Որքան և ցնորական լինի այն բաւականութիւնը, որ արտայայտում է երեքպետեան դաշնակցութիւնը այս առիթով, բայց և այնպէս, կարելի չէ ծածկել, որ Ռուսաստանի մերձեցումը Աւստրիայի և Գերմանիայի հետ, այլ ևս չէ տալիս Ֆրանսիային մի վտանգաւոր ախոյեանի դիրք։—Յիշատակութեան արժանի է և այն, որ Եւրոպան, ինչպէս երևում է, չէ կարող ապրել առանց դաշնակցութիւնների։ Գերմանական և աւստրիական մամուլը, արդէն բոլորովին ապահովված ֆրանս-ռուսական դաշնակցութեան վերաբերմամբ, այժմ քարոզում են միութիւն՝ Անգլիայի դէմ։— Իսկ Անգլիան Կրէտէի պաշարման առաջարկը ոչնչացնելուց յետոյ, նշաններ է ցոյց տալիս, որ ինքը չէ վախենում իր առանձնացած դիրքից և հարկաւոր դէպքում կարող է նոյն իսկ մենակ գործել։

Իտալիան, որ հեռու է մնացած միջին Եւրոպայում տեղի ունեցող ռազմամքութիւններից, բոլորովին թողնել է ուզում արկածների քաղաքականութիւնը, որ այնքան թշուառութիւնների պատճառ դարձաւ Աֆրիկայում։ Որքան և վիրաւորական լինի այդ ազգային մնայարձութեան համար, բայց ամեն ինչ հարկադրում է մի որ և է հայտութեամբ օձիքն ազատել Մէնելիքից։ Առ այժմ բաւական է համարվում թողնել Հաբէշստանի պէս մի համեղ պատառը և սպասողական դիրք բռնել, ապագայ աջող հովերին աչք տնկելով։

Ֆրանսիան պատրաստվում է իր յարգանքները և համակրանքը դէպի Ռուսաստանի ինքնակալը արտայայտել չքեղ ընդունելութիւններով։ Միացեալ Նահանգները զբաղված են նախագահի ընտրութեամբ։

ՆԱՄԱԿ ԲՈԼԳԱՐԻԱՑԻՑ

—

Ռուսճուք, 27 սեպտեմբերի

Թիւրք-պուլկարական սահմանագլխի վրա տեղի ունեցած դէպքի և ընդհարումի մասին հեռագիրը տեղեկութիւն տուած կը լինի ձեզ։ Ճիշդ այն ժամանակ, երբ վասալ Պուլկարիայի և Օսմանեան բռնապետութեան միջև կեցած քաղաքական կացութիւնը բարւոքած կը թէր, մի այս տեսակ դէպքի երևան գալը, ի հարկէ, բարդութիւններ կրնայ առաջացնել բարեկամացած երկու կառավարութիւնների մէջ և կրնայ մթագնել անդամ մի ևս թրքական քաղաքական հորիզոնը։

Օսմանեան կառավարութիւնը, ինչպէս միշտ, այս անգամ ալ, չուշանար—կը սպասեմ—մաքիաւելական միջոցների դիմել արդարացնելու համար ինքզինքը և բացարձակ իրողութիւնը,—որ է կանոնաւոր զինուորների այժով սահմանագլխի բռնաբարումի ծանր հարցը,—վերագրել պաշտպաններին և կամ, իր բառով, պուլկար աւազակների, որ իբր թէ, երկար ատենէ ի վեր կը թափառեն այդ կողմեր։ Համոզուած ենք, որ փութաջանութիւնով կը դիմէ այս միջոցներին՝ ծածկելու համար մանաւանդ յարձակում գործող թիւրք զինուորական խումբին ամօթալի պարտութիւնը. սահմանապահ զինուորները, հազիւ հազ եօթը հոգի, աջողած են կռուիլ 5—6 ժամ և տապալել թուրքեր, իրենց արիութիւնը ակնյայտնի կերպով ցոյց տալով փճացած օսմանցիին և կատղած պաշիպազուքին առաջ։ Ցարձակումը մի և նոյն օրի մէջ կրկնուած է, և սակայն պուլկարները երկրորդ անգամին իրենց հասած եօթանասուն հոգի նոր այժով, աւելի համոզիչ դաս մը կը տան՝ կոտորելով զանոնք և ետ մղելով։

Լսուածին նայելով, Պուլկար կառավարութիւնը բողոքագիրներ ղրկած է Եւրոպայի մեծ պետութիւններին, որոնցմով փոխարինութիւն կը պահանջէ այս առիթով, և կը փութայ յայտարարել, որ այսպիսի դէպքի կրկնուիլը պիտի պարտաւորէր կառավարութիւնը աւելի լուրջ միջոցներ ձեռք առնել այս a la turque գործերու դէմ, որ ազգային արժանապատուութեան, քաղաքական անկախութեան սրբազան իրաւունքների դէմ ոտնձգութիւն նշանակելու երևոյթը ունին։

Կառավարութիւնը, անկասկած, դիւանագիտութեան ներած քաղաքական լեզուի փափուկ դարձուածքներով կը ժայթքէ իր սպառնալիքը, բայց նոյն այն լեզուով չէ որ կը վերաբարուի մամուլը, հասարակաց կարծիքը, որ ի բաց թօթափած կուսակցական ներքին հաշիւները, չանթ կը տեղացնէ խալիֆի կառավարութեան գլխին և միաբերան «առաջ, սահմանագլխէն ալ անդին» կը գոռայ։ Եւ Թիւրքիան, այդ գանգրենէ զանգուած ամբողջութիւնը, եթէ իր իսկական վիճակի հասկացողութիւնը, գիտակցութիւնը ունի, ստիպուած պէտք է զգայ ինքզինքը աւելի խոհեմ, աւելի զգոյշ լինել, զի մի նոր բռնաբարում, մի յիմար, խիզախ քայլ պիտի կրնայ իրեն առաջ հանել 200,000 մի կանոնաւոր հարատ բանակ։ Ընկերվարական թերթերը մանաւանդ շատ անբաւական կը գտնեն ուղղթոր Սթոյիլոֆի տառական բողոքները և «զէնքի բողոք» կը քարոզեն ընդհանուր ազգի ապստամբական զգացումներին կոչ անելով։

Շ. Կ.

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՄՈՍԿՎԱ, 5 սեպտեմբերի։ Կոմս Օրլով-Դավիդով 6000 բուբլի նուիրեց Խոզինա գաչտում սպանվածների որբերին խնամելու համար։

ԿԱԶԱՆ, 5 սեպտեմբերի։ Սեպտեմբերի 4-ին տեղի ունեցաւ անասնաբուժական ինստիտուտի նոր շինութեան օծումը և բացումը։

ԲԼԱԳՈՎԵՇՉԵՆՍԿ, 5 սեպտեմբերի։ Օգոստոսի 30-ին «Ամուր» շոգենաւով հասաւ հաղորդակցութեան ճանապարհների մինիստրը։ Նաւանգիստը զարդարված է իշխան Խիլկովի ազգանուն սկզնատառերով։ Հետեւեալ օրը մինիստրը շարունակեց իր ճանապարհը։

ՈՒԶՈՒՆ-ԱԴԱ, 5 սեպտեմբերի։ Այստեղի նաւանգիստը փոխվում է և տեղափոխվում է Կրասնովոդսկ։

ՊԱՐԻԶ, 6 սեպտեմբերի։ Ցայսմանի հարցաւ-փորձի ենթարկելուց և կատարված քննութիւնից երեւում է, որ ֆէնիաները դաւադրութիւն էին սարքել Անգլիայի դէմ։

ԼՕՆԴՕՆ, 5 սեպտեմբերի։ Ոստիկանական իշխանութիւնները հաստատում են, որ Թօաէրդամում կալանաւորված Վալլաս՝ Կիրնէի աւազակախմբի յայտնի առաջնորդն է, որը 1883 թ-ին Գլասգոում օդը թռցրեց գաղային գործատունը։

ԼՕՆԴՕՆ, 5 սեպտեմբերի։ Ցայսմանի և ուրիշ կալանաւորված ֆէնիաների ձեռքով կազմած դաւադրութիւնը անարխիական դաւադրութեան բնաւորութիւն ունի։ Այստեղի պօլիցիական իշխանութիւնը գիտէր այդ բանի մասին։ Մի քանի ժամանակից ի վեր ամէրիկական ֆէնիաների խումբը զբաղված էր մի չարք յանցաւոր փորձերի պատրաստութեամբ՝ Անգլիայում սարսափ տարածելու համար։ Խմբի անդամները ձերբակալվեցին հէնց այն ժամանակ, երբ ամէն բան պատրաստ էր իրանց նախագիծը դլուխ բերելու համար։

ՍՕՖԻԱ, 5 սեպտեմբերի։ Քաղաքային ընտրութիւնների ժամանակ կառավարչական կուսակցութիւնը կատարեալ յաղթութիւն տարաւ քաղաքներում. 78 քաղաքներից, դիմադրական կուսակցութիւնը յաղթեց միայն երեք քաղաքներում Ֆիլիպսօպլում, Տիրնօվօում և Գրաբօվում։ Շումլայում, ընտրողական բիւրօների կազմութեան պատճառով ընդհարումներ տեղի ունեցան. բանը հասաւ ծեծի և քարեր արձակելուն։ Սլիվնայում բաղօպավեան կանդիդատ Դօգրօնաչէվ վիրաւորվեց հրացանի հարուածով. ձերբակալված են երկու ընտրողներ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 4 սեպտեմբերի։ Օգոստոսի 28-ին ռուսաց աշխարհագրական ընկերութեան անդամ Պատուլիսով երկրորդ անդամ բարձրացաւ Էլբրուսի վրա, ուր հետազօտութիւններ և օդերևոյթաբանական դիտողութիւններ արաւ և հաստատեց մակսիմալ ջերմաչափ։

ՆԻԺՆԻ-ՆՈՎԳՈՐՕԴ, 5 սեպտեմբերի։ Պարգևները կը յայտնվեն կիրակի, սեպտեմբերի 8-ին, ցուցահանդէսի կօնցերտային դահլիճում։

ՀՌՕՄ, 5 սեպտեմբերի։ «Italie» լրագիրը հաղորդում է, որ այն բոլոր լուրերը, թէ Իտալիան դիտաւորութիւն ունի հրաժարվել իր ուղնեցած երկիրներից Աֆրիկայում և Մէնելիքի պահանջներից,—բոլորովին սուտ են։ Մասնացոյց անելով պարլամէնտի առաջ Բուդինիի յայտնած պրօգրամի վրա, լրագիրն ասում է, որ այդ պրօգրամի միտքն է՝ պատաւոր խաղաղութիւն կապել Մէնելիքի հետ, որի մօտ ուղարկված է Ներացցինի՝ խաղաղ բանակցութիւնները վերսկսելու և յայտնելու Նեգուսին, թէ չուտով կուղարկվի գեներալ Վալլէս՝ որպէս թագաւորի լիազօր։

Կ. ՊՕԼԻՍ, 5 սեպտեմբերի։ Հաղորդում են, որ այն օֆիցէրը, որը ռուսաց գեներալի հետ զննում էր Դարդանէլի ամրութիւնները,—Աթէնքի ռուսաց զինուորական ագենտն է, գնդապետ Կալնին։ Ռուս գեներալը հաղորդեց սուլթանին ամրութիւնների դրութեան և նրանց պակասութիւնների մասին։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՑԱՑՏՆՈՒՄ Է

—

ՇՈՒԼԱՎԷՐ, Գ. Բալասեան։ Ձեզ վրա մնում է չորս բուբլի։

ԱՂՍՏԱՖԱ, ուսուցիչ Ռուբէն Պողոսեանց։ Դուք գրում էք, որ հինգ ամիս առաջ մի պիէս էք ուղարկել «Թատրօնի» խմբագիր (?) Թարխանեանցին, բայց յետ ստանալ չէք կարողանում, իսկ ձեր անդադար զիմումների դէմ այդ «խմբագիրը» պահպանում է «Զաքարիայի պապանձում». ուստի երկրորդ անգամ խնդրում էք տպագրել ձեր նամակը, որպէս զի հրապարակով մի բան հասկացրած լինէք «անտանելի լռութեան մատնված խմբագրին»։ Փոխանակ ձեր նամակը տպագրելու, ահա ինչ կասենք ձեզ։ Որ հայ ուսուցիչը առհասարակ «հէգ է», զրկված, դա սարսաղդաբար ճիշդ է, և մենք միայն մեր անկեղծ ցաւակցութիւնը կարող ենք յայտնել։ Բայց եթէ հայ ուսուցիչը այնքան միամիտ է, որ ինքնակոչ «խմբագիրների» կամքին է յանձնում իր դառն աշխատութեան պտուղները, ասացէք, խնդրում ենք, ինչ կարող ենք անել մենք։ Միթէ կարծում էք և այն, որ գրչով գրած զիմումները անտես առնող մարդիկ կը քաշվեն, երբ այդ զիմումները տպված լինեն։ Այդքան միամտութիւն մենք չենք ենթադրում։

ԲԱԼԱԽԱՆԻ, Լ. Դ. Ձեր երկար յօդուածը չենք տպագրի։ Այդքան ուշադրութիւն դարձնել կը նշանակէ արժանացնել ձեր յիշած մարդկանց մի այնպիսի պատի, որ նրանք երազում էլ չեն տեսել։ Ձեզ, ինչպէս երևում է, զարմացրել է յաւիտեան ինքն իր վրա սիրահարված մի խմբագիր, և մէկ էլ մի ուրիշը, որի սածներից ոչ ոք իրաւունք չունի վիրաւորվել, այն պարզ պատճառով, որ վիրաւորանք զգալու համար պէտք է որ նրա խօսքն էլ խօսք լինի։ Միթէ չէք հասկանում, որ այդ մարդիկ զոհ են անգործութեան, պարապութեան։ Երբ կտրվում է մի բան տալու շնորհքը, ուրիշ ինչ կարելի է սպասել, բացի հիւանդոտ զառանցանքներից։—Թողէք զբրանց։ Կեանքը եռում է, առաջ է գնում, այխատեցէք նրան ականջ դնել։ Նայեցէք ձեր շուրջը, տասնեակ հազարաւոր մարդիկ իրանց ողնաշարն են հարստահարում մի կտոր հացի համար։ Եթէ զգում էք ձեր մէջ գրական շնորհք, փորձեցէք ձեր ժամանակը և գրիչը դրանց հոգսերին ծառայեցնել. և այն ժամանակ դուք աւելի օգուտ կը տաք ընթերցող հասարակութեան, քան թէ ուշ ու միտք նուիրելով այն ափեղցիեղ բանդագուշանքներին, որոնք տպագրվում են չը զիտենք ինչի և ում համար։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչ՝ ԱՆԴՐԷԱՍ ԱՐԾՐՈՒՆԻ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Սեպտեմբերի 8-ին, առաւօտեան ժամը 10-ին ս. պատարագից յետոյ՝ լինելու է ս. Մինասս եկեղեցու երեցփոխանի և երեք հաշուատեսների ընտրութիւնը։
Գործակալ՝ Դ. Ա. ք. Խարազեան
1—1

ԼՈՒՍԱՑԻ
ԳԱԲՕԻ ԸՆՏԱՆԻՔԸ

վէպը անմիջապէս ստանալու համար՝ այսուհետև պէտք է դիմել միայն Թիֆլիսի Կենտրոնական գրավաճառանոցը, այսպէս՝ Тифлисъ, Центральная книжная торговля. 8—10

ՄԻ ՑԷՆԶԱՒՈՐ ՈՒՍՈՒՑԻՉ

որ արել է եօթ տարի ուսուցչութիւն, ցանկանում է դասեր ունենալ հայոց եկեղեցականծխական դպրոցներում. հասցէն՝ Гори, Александру Китіеву.
№ 103 2—2

ԴՊՐՈՑ
ԳԷՈՐԳ ԿՈՒՋԱՆԵԱՆՑԻ

(Մուխրանեան փողոց, տուն այրի Կօրգանովայի, № 12, քաղաքային բուժարանի դիմաց)
Երեխաների ընդունելութիւն ներկայ օգոստոսի 27-ից, իսկ ուսման սկիզբը սեպտեմբերի 4-ից։ (№ 98) 4—4

ԴՊՐՈՑ ԵՒ ՊԱՆՍԻՕՆ
ՏԷՐ-ՅՈՎՍԷՓԵԱՆԻ

Երեխաների ընդունելութիւնը օգոստոսի 28-ից, պարապմունքները սեպտեմբերի 5-ից։ Սաղօվայա փողոց, 46։ 5—10

ԱԶԱԿԵՐՏՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ

Ուսուցչուհիների և դաստիարակչուհիների փոխադարձ օգնութեան ընկերութեան դպրոցում (Վէլիամինօվսկայա փողոց, № 3, քաղաքային տան կից) սկսվում է օգոստոսի 26-ից ամէն օր (բացի կիրակի և տօն օրերից) առաւօտեան ժամը 10-ից մինչև 1-ը և երեկոյեան 6—7։

Դպրոցը բաղկացած է հինգ բաժանմունքից, այն է երկու պատրաստականներ (հայոց և վրաց), ստորին, միջին և բարձր։ Պատրաստական բաժանմունքում ընդունվում են ռուսերէն չը խօսող երեխաներ և պարապմունքը լինում է տեղական լեզուների օգնութեամբ. մնացածների մէջ պարապմունքը լինում է ռուսերէն և բարձր բաժանմունքի մէջ երեխաները պատրաստվում են մտնելու բոլոր միջնակարգ ուսումնարանների ստորին դասարանները։

Երեխաները ընդունվում են երկու սեռի, 6 տարեկանից ոչ աւելի։ Դպրոցում կայ աչակերտական բնակարան։ Ուսումը կը սկսվի սեպտեմբերի 5-ից։ (№ 102) 3—5

Հարկաւոր է «ՄՇԱԿ» լրագրի 1895 թ-ի հետեւեալ համարները. № № 32, 33, 34, 35, 36, 37, 38, 39, 42, 44, 45, 46, 65, 71։

Ընդունողները թող բարեհաճեն ուղարկել հետեւեալ հասցէով. ХАРКОВЪ. Студенту Ивану Теръ-Микельянцу. Վճարը նոյն տեղից։
(№ 101) 3—3

ՄՕՍԿՎԱՅԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ Գ. ՀՈԳԱԲԱՐՁՈՒԻ ԹՈՒՅԼՏՈՒԹԵԱՄԲ ընդունում եմ իմ ընտանիքում, Մօսկվայում, միջնակարգ ուսումնարանների ԳԻՇԵՐՕԹԻԿ ԱՇԱԿԵՐՏՆԵՐ. բնակարան, լաւ կերակուր և հսկողութիւն. վճարն է 350 բուբլի ուսումնարանական տարեշրջանի համար։ Ծնողների հետ առանձին համաձայնութեամբ կարելի է և դասերը պատրաստելով պարապել։

Օտար լեզուների կուրսեր Բարրիերի, Մօսկվա, Մեսանիցկայա, տ. Անանովի, Լազարեան ճեմարանի մօտ և երրորդ և չորրորդ գիմնազիաների միջտեղ։
(№ 104) 1—2

ԿԷՕԼԷՐԵԱՆ ՀՈՏԱՒԷՏ ՋՈՒՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ, Նեվսկի Պրոսպեկտ, 16, խանութ «ЦЕНТРАЛЬНАЯ ПОРФЮМЕРІЯ»
Մօսկվայում, Ռ. ԿԷՕԼԷՐԻ և ԸՆԿ. խանութներում։

Ով ծանօթ չէ «ԿԷՕԼԷՐԵԱՆ ՀՈՏԱՒԷՏ ՋՐԻ» յատկութիւններին, պէտք է նրանց պարզել, որ նա ոչ թէ նմանութիւն է օդէկոլօնի, իսկական կէօլնի, կամ ռուսաց արտադրութեան, այլ իրանից ներկայացնում է կատարելապէս անկախ, ԿԱԶՄՈՒԹԵԱՄԲ ԲՈԼՈՐՈՎԻՆ ՕՐԻԳԻՆԱԼ ԱՐԴԻՒՆԱԲԵՐՈՒԹԻՒՆ։ ԱՌԱՒԵԼՈՒԹԻՒՆՆԵՐԸ՝ մեծ պնտութիւն և հոտաւէտ հիւթերի մեծ քանակութիւն. պնդացնող է, ս հաճելի-թարմացնող. նրա առանձին տեսակի հոտը տևում է մի քանի օր։

Այդ յատկութիւնները, համեմատաբար էժան գնի հետ միասին, որ նրա ձեռք բերելը հանրամատչելի է կացուցանում, դարձրել են այդ ջուրը շատ տարածված։

Վաճառվում է՝ ԱՄԵՆ ՏԵՂ և քոլոր նշանաւոր առևտրականների մօտ։ (26) 2—3

ՌՈԵԻՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

ԵՐԿՈՒ ՍԵՌԻ ԱՆԶԱՆՑ ՀԱՄԱՐ

ՏԱՍՆՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Առևտրական կուրսերի նպատակն է՝ մասնագիտական առևտրական կրթութիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել գործնական ճանապարհով հմուտ հաշուապահներ։ Աւարտողները ստանում են ատեստատներ։

Աւանդելի առարկաք սրանք են՝ 1) Առևտրական ֆնտեսութիւն, 2) Առևտրական թուաբանութիւն, 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկային), 4) Թուաբանութիւն համրիչի վրա, 5) Առևտրական թղթակցութիւն, 6) Առևտրական և մուրհակի կանոնագրութիւն և 7) Գեղագրութիւն, վատ ձեռքի ուղղելը։

Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 16-ից։ Ընդունելութիւնը սեպտեմբերի 2-ից, ամենայն օր, առաւօտեան 10-ից մինչև 11-ը, և երեկոյեան 4-ից մինչև 8 ժամը, կուրսեր հիմնողի բնակարանում, Սօլօլակում, Ալէքսանդր Քրիդոնովի տանը, № 9, Սերգիեվսկայա և Նազարնայա փողոցների անկիւնում։ Ծրագիրը և կանոնները կարելի է ստանալ ձրի ապէս եղբ. Ծովիանովների բանկային դրասենեակում և կուրսեր հիմնողի բնակարանում։ Օտարաքաղաքացիք դիմում են՝ Тифлисъ, С. П. Мануэльянцу.
(Ե. շ.) № 73 17—25

ՌԱԳՈՒ

Կառավարութեան թոյլտուութեամբ

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՔ

ԵՐԿՈՒ ՍԵՌԻ ԱՆԶԱՆՑ ՀԱՄԱՐ

(Պարբերաբար իւրաքանչիւր 4—5 ամսից յետոյ)

ԾՐԱԳԻՐ. 1) առևտրական թուաբանութիւն. 2) ՆԱԻԹԱՑԻՆ ԱՐԴԻՒՆԱԲԵՐՈՒԹԵԱՆ, յոգեհնաւային, առևտրական և բանկային ԿՐԿՆԱԿԻ ՀԱՇՈՒԱՊԱՀՈՒԹԻՒՆ ՏԵՍԱԿԱՆ ԵՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ (теорія и практика). 3) թուաբանութիւն համրիչի վրա. 4) առևտրական և մուրհակի կանոնագրութիւն։

Ընդունելութիւնը օգոստոսի 20-ից. պարապմունքները սեպտեմբերի 10-ից։

Դիմել՝ БАКУ, Татарская ул. д. № 30, կամ въ контору Бакинск. отдѣл. «Бр. Цовьяновы и К.»
10—15 (№ 77) (յ) Դասատու-հաշուապահ ԱՐՇԱԿ ՏԷՐ-ԴԱՍՊԱՐԵԱՆՑԻՆ

„ՄՇԱԿԻ“ ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ

Վաճառվում են հետեւեալ հայերէն գրքերը — Գինը

1) ԵՎԷԼԻՆԱ, Գրիգոր Արծրունու . . . . . 50 կօպ
2) ԹԻՒՐՔԱՑ ՀԱՅԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆ, Գ. Արծրունու 20 „
3) ՄՏՔԻ ՄՇԱԿԸ, Խ. Մալումեանի. . . . . 50 „
4) ԱԼԱՍՈՒՆ, Ա. Քալանթարի. . . . . 20 „
5) ԶԷՅԹՈՒՆ, Հ. Առաքելեանի. . . . . 20 „

Օտարաքաղաքացիները կարող են վճարը փողի տեղ ուղարկել պօստային մարկաներով։ (№ 59) 10—10

ԿԱԿԱՕ ԲԼՕՕԿԼԻՐ

ՍՆՆԴԱՐԱՐ ԽՄԻՉՔ, արկղիկներում, 1/1, 1/2, 1/4 և 1/8 կիլօգրամ։ (GRAND PRIX) Բարձրագոյն պարգև։ Անտվերպէնի 1894 թ-ի համաշխարհային ցուցահանդիսում։

Գլխաւոր պահեստը՝ գեղարարական ապրանքների Բարձրագոյն հաստատված կովկասեան ընկերութիւնը Թիֆլիսում։ (№ 6) (Ե) 34—50

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ Է ԵՒ ՄԻՆՉԵՒ ՍԵՊՏ. 15-Ը ԼՈՑՍ ԿԸ ՏԵՍՆԻ

Գէորգ-բէգեանի եւ Պանճուլազեանի
ԹՈՒԱԲԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ Բ-ՐԴ ՄԱՍԸ (կոտորակներ)

Ցանկացողները դիմելու են՝ Թիֆլիս, «Կենտրոնական գրավաճառանոց»։ (№ 102) 2—2

Дозволено цензурою, Тифлисъ, 6 Сентября 1896 г. Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. кав